# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» մայիսի 2024թ. N ՄՊ/238-Ա

ք. Արմավիր

**ՎԱՐԴԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ «ԼԵՆՈՒՂՈՒ ՋԻՎԱՆՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և 6-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2024 թվականի մայիսի 22-ի զեկուցագիրը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկայի ուսուցչուհի Վարդինե Հովհաննիսյանին:
2. Վարդինե Հովհաննիսյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-05-23 11:13:01 GMT+4
Հավաստված է ԷՀՍԹԳ-ի կողմից

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**